ՄՈՐՈՒՍ ՍՏԵՓԱՆԻ ՀԱՍՐԱԹՅԱՆ

Սովետական հայագիտությունը ծանր կորուստ կրեց։ Երկարատև հիվանդությունից հետո, փետրվարի 25-ին, 77 տարեկան հասակում վախճանվեց ականավոր պատմաբան, բանասեր և հնագետ, գիտության վաստակավոր գործիչ,

Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ Մորուս (Մարգար) Ստեփանի Հասրաթյանը։

Մ. Հասրաթյանը ծնվել է 1902 թ. սեպտեմբերի 10-ին Սիսիանի շրջանի Ախլաթյան գյուղում։ Նախնական կրթությունը ստացել է գյուղի դպրոցում, միջնակարգը՝ Բաքվում։ Այստեղ, պրոլետարական միջավայրում, նա զինվորագրվում է հեղափոխության գործին. 1918—1921 թթ. մասնակցում Բաքվի կոմունայի, Հյուսիսային Կովկասի և Զանգեզուրի ֆաշիստական կոիվներին։

1922—1924 թթ. Մ. Հասրաթյանը սովորում է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետում։ 1925—1927 թթ. մոբիլիզացվում և կոմերիտական ղեկավար աշխատանք է կատարում Սիսիանում, Գորիսում, Դիլիջանում։ 1930 թվականին էքստերն քննությամբ ավարտում է համալսարանը և ամբողջովին նվիրվում գիտական աշխատանքի։ 1931—1932 թթ. ասպիրանտական ուսումնառությունն անց է կացնում Լենինգրադում, Ն. Մարի և Հ. Օրբելու ղեկավարությամբ։

Վերադառնալով Երևան, Մ. Հասրաթյանը 1933 թ. աշխատում է Նյութական կուլտուրայի պատմության ինստիտուտում, որպես դիրեկտորի տեղակալ, 1934—1936 թթ. կուսակցության պատմության ինստիտուտի դիրեկտորի տեղակալ և հեղափոխության թանգարանի դիրեկտոր, 1937—1938 թթ. Մատենադարանի դիրեկտոր։ Այդ տարիներին Մ. Հասրաթյանը բեղմնավոր գիտական և կազմակերպական աշխատանք է կատարում հատկապես Հայաստանի հեղափոխական շարժումների պատմության ուսումնասիրության բնագավառում։

1940 թվականից Մ. Հասրաթյանի գիտահետազոտական աշխատանքներն ընթանում են հնագիտության, բանասիրության և հայ ժողովրդի հին ու միջին դարերի պատմության ուսումնասիրության գծով։ 1940—1941 թթ. նա ղեկավարում է Ավանի նշանավոր հուշարձանի հնագիտական և ճարտարապետական ուսումնասիրությունը։ 1942—1946 թթ. աշխատում է գրականության ինստիտուտում, զբաղվում բանասիրական հարցերով, միաժամանակ (1943—1946 թթ.) վարում ԳԱ հասարակագիտական բաժանմունքի գիտական քարտուղարի պաշտոնը։ 1947—1954 թթ. Մ. Հասրաթյանը պատմության ինստիտուտի ավագ գիտաշխատող էր պատմության, հնագիտության, դասագրքերի հետ կապված բարդ ու կնճռոտ հարցերի գիտական մշակման գործուն մասնակից։

Լայն էր ու բազմակողմանի Մորուս Հասրաթյանի գիտական հետաքրքրությունների շրջանակը, հեռասլաց նրա մտքի թռիչքը։ Հայաստանի պալեոլիթի, հայ ժողովրդի ծագման, Մովսես Խորենացու Պատմության, հայ ազատագրական պայքարի, հասարակական-քաղաքական մտքի, հնագիտության, բանասիրության, ճարտարապետության և շատ ու շատ ուրիշ հարցեր, իր գրավոր և բանավոր ելույթներում, նա քննում ու վերլուծում էր խորությամբ ու կուռ տրամաբանությամբ։ Նա իր մեծ ուսուցիչների՝ Մ. Ա-

բեղյանի, Հ. Մանանդյանի, Հ. Աճառյանի, Ն. Մառի, Հ. Օրբելու և մյուսների արժանավոր աշակերտն էր, երիտասարդ սերնդի հետ նրանց կապող ոսկե կամուրջ։

Անգնահատելի է Մորուս Հասրաթյանի վաստակը սայաթնովագիտության մեջ։ Սայաթ-Նովայի հայերեն տաղերի խմբագրությունն ու Հշգրտումները, վրացերեն և ադրբեջաներեն տաղերի հայերեն չափածո թարգմանություններն ու մեկնաբանությունները, հիրավի, բանաստեղծական տաղանդի, պատմագիտական ու բանասիրական խորաթափանց մտքի ու լայն գիտելիքների արգասիք էին։ Նա նոր աստիճանի բարձրացրեց սայաթնովագիտությունը։

Հայրենանվեր գիտնականն ու մանկավարժը մոտ 50 տարի դասախոսական աշխատանք էր կատարում Երևանի բանֆակում, կուսդպրոցում, պետական համալսարանում և Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտում։ Այստեղ նա վարել է նաև հայ ժողովրդի պատմության ամբիոնը։ Մանկավարժի բնատուր ձիրք ուներ նա, ուսանողությանը բազմակողմանիորեն կրթելու և դաստիարակելու բարձր ունակություն, սեփական օրինակով երիտասարդության վրա ներգործելու կարողություն ու հմայք։ Նրա հազարավոր սաներից շատերն այսօր նշանավոր գիտնականներ և մանկավարժներ են, կուսակցական ու պետական աշքի ընկնող գործիչներ։

Շուրջ մեկ տասնամյակ նա գլխավորել է Հայաստանի պատմության թանգարանը, ուր նվիրումով պահպանել, հարստացրել ու ժողովրդի սեփականությունն է դարձրել մեր դարավոր մշակույթի գանձերը։ Ե. Լալայանի, Ե. Շահաղիղի, Ս. Լիսիցյանի, Ռ. Դրամբյանի, Կ. Ղաֆադարյանի և ուրիշների անվան հետ, Մ. Հասրաթյանի անունը, անտարակույս, իր արժանի տեղը կգրավի թանգարանագիտության պատմության մեջ։

Մ. Հասրաթյանը մեկն էր այն քչերից, որ իր հարուստ գիտելիքները ի սպաս դրեց նաև սփյուռքահայությանը։ Բեյրութի հայկական առաջադիմական կազմակերպությունների հրավերով, 1965—1966 թթ. նա դասախոսություններ կարդաց Հայկազյան կոլեջում և կրթական այլ հաստատություններում, իր կենդանի եւ հմայիչ խոսքով լիբանանահայությանը ծանոթացրեց մայր հայրենիքի աննախընթաց վերելքի, գիտության ու մշակույթի ծաղկման հետ, սատար եղավ հայագիտական բարձր կուրսերի կազմակերպմանն ու երիտասարդ հայագետների պատրաստմանը, հայրենիքի և սփյուռքի գիտական կապերի ամրապնդմանը։ Այդ և հետագա տարիների նրա ու Ճարտարապետության դոկտոր, պրոֆեսոր Վարազդատ Հարությունյանի համատեղ աշխատանքի արդյունքը եղավ 1975 թ. Բեյրութում հայերեն, ֆրանսերեն և անգլերեն լեզուներով շքեղ հրատարակված «Հայաստանի հուշարձանները» արժեքավոր աշխատությունը։

Հայրենիքը բարձր է գնահատել Մ. Հասրաթյանի գիտական-մանկավարժական վաստակը. նա քանիցս պարգևատրվել է ՀՍՍՀ Գերագույն սովետի պատվոգրերով, 1961 թ. արժանացել է գիտության վաստակավոր գործչի բարձր կոչման, 1963-ին ընտրվել ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամ։

«Քայլող հանրագիտարան»— այդպիսին էր բազմակողմանի գիտելիքներ ամբարած, միշտ արթուն, պրպտող ու խորաթափանց մտքի տեր, համեստ ու ազնիվ, ամենքից սիրված ու հարգված մեր անզուգական Մորուսը։ Հիանալի մարդու և քաղաքացու, անշահախնդիր, ուղղամիտ ընկերոջ՝ Մորուս Հասրաթյանի հմայիչ կերպարը միշտ վառ կմնա բոլոր նրանց սրտերում, ում համար թանկ է գիտության երախտավորների հիշատակը։

ՎԱՐԴԱՆ ՊԱՐՍԱՄՅԱՆ
Պատմական գիտությունների դոկտոր